



«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԿԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ»

տեղեկատվական գրքույկում ներառված են գյուղատնտեսության ոլորտում ՇՇ կառավարության կողմից իրականացվող պետական օժանդակության բոլոր ծրագրերը, որոնք նպատակաուղղված են, մասնավորապես, սոսիալական «խելացի» անասնապահության, ինտենսիվ այգեգործության, նորագույն տեխնոլոգիաներով հագեցած գյուղատնտեսության զարգացմանը:

Ծրագրերի հիմքում երկրում բարձրարժեք, նորարար, արտահանմանը միտված, արդյունաբերական գյուղատնտեսության խթանման տեսլականն է՝ որը շահառուներին հնարավորություն կտա ստեղծել և ժամանակակից աշխարհի պահանջներին համաքայլ զարգացնել իրենց ագրոբիզնեսը:

Տեղեկատվական գրքույկում կարող եք ծանոթանալ ծրագրերի պայմաններին, դիմելու ընթացակարգերին: Մանրամասների համար այցելեք www.minagro.am կայքէջ, որտեղ կգտնեք նաև յուրաքանչյուր ծրագրի վերաբերյալ առանձին խորհրդատվական տեսալուսկոթեր:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՂՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիրն ուղղված է Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքներում ագրոպարենային ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրականացվող զարգացման ծրագրերի վարկավորմանը:

⇒ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ՝

- ✓ սուբսիդավորման արդյունքում՝
 - 5 % տոկոսադրույք.
 - գյուղատնտեսական կոոպերատիվներին՝ 3 %.
 - սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տնտեսավարողներին՝ 0 %.
- ✓ վարկի գումարը՝ 3-15 մլն ՀՀ դրամ.
- ✓ վարկի մարման ժամկետը՝ մինչև 5 տարի.
- ✓ մայր գումարի և տոկոսադրույքի մարման արտոնյալ ժամկետը՝ մինչև 12 ամիս:

Վարկի վաղաժամկետ վճարման դեպքում տույժեր և տուգանքներ չեն սահմանվում:

⇒ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ծրագրից օգտվելու համար՝

- տնտեսավարողը դիմում է հետևյալ ֆինանսական կառույցներին՝

↵ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՂ ԲԱՆԿ» ՓԲԸ

↵ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

↵ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ

↵ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

↵ «ԱՆԻՎ» ՈՒՎԿ ՓԲԸ

↵ «ԱԳՐՈՂԻԶԻՆԳ ԼՎԿ» ՍՊԸ

↵ «ԿԱՍՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ

↵ «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ

↵ «ԶԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ

↵ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ

- ֆինանսական կառույցների կողմից ուղարկված հայտերի հիման վրա տնտեսավարողը մասնակցում է նախարարության կողմից կազմակերպվող հավաստագրման գործընթացին.
- հավաստագիր ստանալուց հետո տնտեսավարողը կարող է վարկային հայտ ներկայացնել ֆինանսական կառույցներին:

→ Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել նախարարության գյուղատնտեսության պլանավորման և զարգացման վարչություն, հեռ.՝ (011) 56-12-35, (011) 52-52-32, գիտության և խորհրդատվության վարչություն, հեռ.՝ (011) 29-74-28:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ` ԼԻԶԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության` լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում տնտեսավարողները հնարավորություն ունեն լիզինգով ձեռք բերել նոր գյուղատնտեսական տեխնիկա:

⇒ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ`

- ✓ 20% կանխավճար.
- ✓ սուբսիդավորման արդյունքում` լիզինգի տարեկան 2 % տոկոսադրույք.
- ✓ ձեռք բերվող տեխնիկաների արժեքների հանրագումարը 1 տնտեսավարողին` 200 մլն ՀՀ դրամ.
- ✓ արտոնյալ ժամկետը` տարեկան մինչև 6 ամիս.
- ✓ մարման ժամկետը`
 - կոմբայնների համար` 10 տարի.
 - տրակտորների համար` 6 տարի.
 - հավաքիչ-մամլիչների, շարքացանների համար` 3-6 տարի.
 - այլ գյուղատնտեսական տեխնիկայի համար` 3 տարի:

Ընդ որում միևնույն շահառուին միաժամանակ տրակտորներ և այլ գյուղտեխնիկա լիզինգով տրամադրելու դեպքում մարման ժամկետը կարող է սահմանվել 6 տարի:

⇒ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ծրագրից օգտվելու համար անհրաժեշտ է դիմել ծրագրի մասնակից ֆինանսական կառույցներին`

- ↪ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
- ↪ «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ
- ↪ «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ
- ↪ «ԶԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ
- ↪ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ

➔ Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել նախարարության գյուղատնտեսության պլանավորման և զարգացման վարչություն, հեռ.՝ (011) 56-12-35, (011) 52-52-32:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ՝ ԼԻԶԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՅՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի շրջանակներում ագրոպարենային ոլորտում գործող ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց, այդ թվում՝ գյուղատնտեսական կոոպերատիվներին, հնարավորություն է տրվում լիզինգով ձեռք բերել անհրաժեշտ սարքավորումներ:

⇒ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ՝

- ✓ կանխավճարի չափը՝ 20 %.
- ✓ սուբսիդավորման արդյունքում՝
 - 4% տոկոսադրույք.
 - սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տնտեսավարողներին՝ 0 %.
- ✓ յուրաքանչյուր լիզինգառուի կողմից ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը՝ մինչև 450 մլն ՀՀ դրամ.
- ✓ լիզինգի մարման ժամկետը՝ մինչև 8 տարի.
- ✓ մայր գումարի մարման արտոնյալ ժամկետը՝ 3 ամիս:

Ծրագրի շրջանակում լիզինգի պայմանագրով տնտեսավարողներին տրամադրվում են հետևյալ ոլորտներում օգտագործվող սարքավորումներ՝

- անասնաբուծություն, այդ թվում՝ տավարաբուծություն, ոչխարաբուծություն, խոզաբուծություն, թռչնաբուծություն, մեղվաբուծություն, ձկնաբուծություն, արդյունագործական գազանաբուծություն.
- բուսաբուծություն, այդ թվում՝ ջերմոցային տնտեսություն.
- սառնարանային տնտեսություն, այդ թվում՝ կաթի մթերման կայաններ և կաթ տեղափոխող իզոթերմիկ ցիստեռններ.

- թարմ պտուղ-բանջարեղենի և հատիկաընդեղենի տեսակավորման, փաթեթավորման ու հատիկաընդեղենի զտման գործունեություն.
- սպանդանոցային տնտեսություն.
- ագրովերամշակող արդյունաբերություն.
- ագրոպարենային ոլորտի այլ գործունեություն:

⇒ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ծրագրից օգտվելու համար՝

1. շահառուն ընտրում է մատակարար ընկերությանը, որից հետո ֆինանսական լիզինգի հայտ է ներկայացնում ծրագրի մասնակից ֆինանսական կառույցներին՝
 - ↪ «Արմավիսբանկ» ՓԲԸ
 - ↪ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
 - ↪ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
 - ↪ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
 - ↪ «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
 - ↪ «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ
 - ↪ «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ
 - ↪ «ԶԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ
2. ֆինանսական կառույցը հայտի ընդունումից հետո պահանջում է վճարել 20 տոկոս կանխավճարը, որից հետո մատակարար ընկերության հետ կնքում է առաքման պայմանագիր.
3. սարքավորումը Հայաստան հասնելուց հետո ֆինանսական կառույցը լիզինգի պայմանագրի հիման վրա այն տրամադրում է շահառուին:

➔ Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել Նախարարության ագրովերամշակման զարգացման վարչություն, հեռ. (011) 23-01-80:

ՓՈԲՐ ԵՎ ՄԻՋԻՆ «ԽԵԼԱՑԻ» ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՇՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի շրջանակում առաջարկվում է անկապ բոքսային պահվածքով անասնաշենքերի և դրանց տեխնոլոգիական ապահովման 2 տարբերակ.

- ✓ թեթև կոնստրուկցիայով անասնաշենք,
- ✓ այլ տիպի անասնաշենք:

ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է 3 ՄՈԴԵԼ	
I ՄՈԴԵԼ	130-280 քառակուսի մետր արտադրական տարածքով՝ անկապ պահվածքով առնվազն 10-15 գլուխ կենդանու համար: Կառուցման և տեխնոլոգիական ապահովման համար ծախսերը գնահատվում են շուրջ 11 մլն ՀՀ դրամ:
II ՄՈԴԵԼ	281-450 քառակուսի մետր արտադրական տարածքով՝ անկապ պահվածքով առնվազն 20-25 գլուխ կենդանու համար: Կառուցման և տեխնոլոգիական ապահովման համար ծախսերը գնահատվում են շուրջ 23 մլն ՀՀ դրամ:
III ՄՈԴԵԼ	451 և ավելի քառակուսի մետր արտադրական տարածքով՝ անկապ պահվածքով առնվազն 40-45 գլուխ կենդանու համար: Կառուցման և տեխնոլոգիական ապահովման համար ծախսերը գնահատվում են շուրջ 35 մլն ՀՀ դրամ:

⇒ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ՝

Ծրագիրը կարող է իրականացվել ինչպես կապալառու կազմակերպության միջոցով, այնպես էլ առանց կապալառու կազմակերպության:

ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՇԱՏՈՒՑՈՒՄ		
I ՄՈԴԵԼԻ ՇԱՄԱՐ	II ՄՈԴԵԼԻ ՇԱՄԱՐ	III ՄՈԴԵԼԻ ՇԱՄԱՐ
5.5 մլն ՀՀ դրամ	11.5 մլն ՀՀ դրամ	17.5 մլն ՀՀ դրամ

Զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության կամ գործողությունների իրականացման արդյունքում հաշմանդամ դարձած քաղաքացիների և Շայաստանի Շանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար

I ՄՈԴԵԼԻ ՇԱՄԱՐ	II ՄՈԴԵԼԻ ՇԱՄԱՐ	III ՄՈԴԵԼԻ ՇԱՄԱՐ
7.7 մլն ՀՀ դրամ	16.1 մլն ՀՀ դրամ	24.5 մլն ՀՀ դրամ

⇒ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ծրագրից օգտվելու համար՝

1. տնտեսավարողը դիմում է ներկայացնում նախարարություն (դիմումի հետ ներկայացվում է անշարժ գույքի սեփականության (օգտագործման կամ վարձակալության) իրավունքի գրանցման վկայական: Անշարժ գույքի օգտագործման կամ վարձակալության վկայական ներկայացնելու դեպքում ներկայացվում է նաև անշարժ գույքի սեփականատիրոջ համաձայնությունը՝ կառուցապատման (վերակառուցման) համար).
 2. դիմումի հիման վրա իրականացվում է տեղազննություն (դիմումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում).
 3. տնտեսավարողը մասնակցում է անասնաբուծության վարման վերաբերյալ դասընթացի և ստանում հավաստագիր (5-օրյա դասընթաց).
 4. կնքվում է պայմանագիր տնտեսավարողի և նախարարության միջև (ծրագրի 26-րդ կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում).
 5. իրականացվում է շինարարություն, որից հետո տրվում է փոխհատուցման գումարի 50 %-ը.
 6. իրականացվում է տեխնոլոգիական վերազինում, որից հետո տրվում է փոխհատուցման գումարի մնացած 50 %-ը:
- Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել նախարարության պլանավորման և զարգացման վարչություն, հեռ.՝ (011) 56-12-35, (011) 52-52-32, անասնաբուծության և անասնաբուծության վարչություն, հեռ.՝ (011) 52-93-33:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ

«ՀՀ տավարաբուծության 2019-2024 թթ. զարգացման» ծրագիրն ուղղված է ՀՀ-ում տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների (ԽԵԿ) մատակարարմանը: Ծրագրի շրջանակում տնտեսավարող սուբյեկտները հնարավորություն ունեն ձեռք բերել տոհմային ԽԵԿ տեղական տնտեսություններից կամ ներկրել այլ երկրներից:

⇒ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ՝

- ✓ երիևջներ և 14-17 ամսական էգ մատղաշ.
- ✓ սուբսիդավորման արդյունքում
 - 2 % տոկոսադրույք.
 - կոոպերատիվների և սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար՝ 0 %.
- ✓ վարկի մարման ժամկետը՝ 5 տարի.
- ✓ մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ 1 տարի. (մեկնարկային տարվա սկզբում)
- ✓ վարկի գումարը՝ առավելագույնը 300 մլն ՀՀ դրամ.
- ✓ 1 գլուխ տոհմային ԽԵԿ-ի հաշվարկային արժեքը՝ 1 մլն ՀՀ դրամ


⇒ **ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

Ծրագրից օգտվելու համար անհրաժեշտ է դիմել ծրագրի մասնակից ներքոնշյալ ֆինանսական կառույցներին՝ ներկայացնելով տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներ ձեռք բերելու վերաբերյալ դիմում-հայտ, նշելով դրանց քանակը, ձեռքբերման վայր(եր)ը (հասցե), ներմուծման դեպքում ներկրման ժամկետները:

- | | |
|----------------------------------|--|
| ⇒ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ | ⇒ «ԱՆԻՎ» ՈՒՎԿ ՓԲԸ |
| ⇒ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ | ⇒ «ԱԳՐՈԼԻԶԻՆԳ ԼՎԿ» ՍՊԸ |
| ⇒ «Արդշինբանկ» ՓԲԸ | ⇒ «ԿԱՄՈՒՐԶ» ՈՒՎԿ ՓԲԸ |
| ⇒ «ՇԱՐԴ ԱԳՐՈԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ | ⇒ «ԶԱՐԴ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՈՒՎԿ ԱԿ |
| ⇒ «ՇԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ | ⇒ «Շայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ |
| ⇒ «ՇԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ | |
| ⇒ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ | |
| ⇒ «ՎՏԲ-ՇԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ | |

Դրական եզրակացություն ստանալուց հետո նախարարություն ներկայացնել ձեռքբերման ենթակա խոշոր եղջերավոր կենդանիների տոհմային վկայականները և քարտերը՝ խորհրդատվություն ստանալու նպատակով:

→ Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել նախարարության անասնաբուծության և անասնաբուժության վարչություն, հեռ.՝ **(011) 52-93-33:**



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՈՒՄՔԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ (ԳՆՈՒՄՆԵՐԻ) ՆՊԱՏԱԿՈՎ ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակում մթերումների կազմակերպման, այդ թվում՝ կանխավճարների տրամադրման համար նպատակային վարկեր են տրամադրվում **պտուղ-բանջարեղեն, խաղող և կաթ** մթերող անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց, այդ թվում՝ գյուղատնտեսական կոոպերատիվներին:

⇒ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ՝

- ✓ սուբսիդավորման արդյունքում
 - 3% տոկոսադրույք.
 - սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տնտեսավարողներին՝ 0 %.
- ✓ վարկի գումարը՝ մինչև 1,5 մլրդ ՀՀ դրամ.
- ✓ վարկի մարման ժամկետը՝ մինչև 1 տարի.
- ✓ մայր գումարի մարման արտոնյալ ժամկետը՝ 2-3 ամիս:

⇒ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ծրագրից օգտվելու համար վերամշակող ընկերությունը պետք է՝

1. համապատասխան տնտեսությունների հետ կնքի հումքի գնման պայմանագրեր, որոնց օրինակելի ձևերը տեղադրված են նախարարության www.minagro.am պաշտոնական կայքում.
2. լրացնի ծրագրի Ձև N 1-ը.
3. կնքված պայմանագրերով և լրացված Ձև N 1-ով դիմի ծրագրի մասնակից ֆինանսական կառույցներին՝

- ☞ «ԱՎԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
- ☞ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
- ☞ «Արդշինբանկ» ՓԲԸ
- ☞ «Արմսվիսբանկ» ՓԲԸ
- ☞ «Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Շայաստան» ՓԲԸ
- ☞ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
- ☞ «Ինեկոբանկ» ՓԲԸ
- ☞ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
- ☞ «ՇԱՅԲԻՋՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
- ☞ «ՇԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ
- ☞ «Շայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ
- ☞ «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ

➔ Շավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել նախարարության ագրովերամշակման զարգացման վարչություն, հեռ.՝ (011) 23-54-71, (011) 23-01-80:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽԱՂՈՂԻ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՄՇԱԿՎՈՂ ԻՆՏԵՆՍԻՎ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ԵՎ ՀԱՏԱՊՏՂԱՆՈՅՆԵՐԻ ՀԻՄՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող **ինտենսիվ պտղատու այգիների** և **հատապտղանոցների** հիմնման համար պետական աջակցության ծրագրով նախատեսվում է շահառուներին տրամադրել սուբսիդավորվող վարկ կամ կատարված ծախսերի մասնակի փոխհատուցում:

ՏԱՐԲԵՐԱԿ 1

ԵՔԵ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ՎԵՐՑՆԵԼ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՎԱԾ ՎԱՐԿ

⇒ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆԵՐՆ ԵՆ՝

- ✓ 0,5 – 10 հա խաղողի կամ ինտենսիվ պտղատու այգի.
- ✓ 0,5 – 3 հա հատապտղանոց.
- ✓ սուբսիդավորման արդյունքում՝
 - 2 % տոկոսադրույք.
 - նվազագույնը 3 հա այգի հիմնող կոոպերատիվների և սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար՝ 0 %.
- ✓ վարկի մարման ժամկետը՝ 8 տարի.
- ✓ մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ 5 տարի:

Ծրագրով նախատեսված է այգեհիմնում, մեկ տարվա խնամքի իրականացում կապալառու կազմակերպության կամ շահառուի միջոցով:



ԾՐԱԳՐԻ ՄԵԿ ՇԱՀԱՌՈՒՄԸ ՏՐՎՈՂ ՎԱՐԿԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐՆ ԵՆ

ԵԹԵ ԱՅԳԵՇԻՄՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ԿԱՊԱԼԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

խաղողի այգի 108 մլն ՀՀ դրամ	կարկտապաշտպան ցանցով 144 մլն ՀՀ դրամ
ինտենսիվ պտղատու այգի 187 մլն ՀՀ դրամ	կարկտապաշտպան ցանցով 248 մլն ՀՀ դրամ
հատապտղանոց 69.6 մլն ՀՀ դրամ	կարկտապաշտպան ցանց նախատեսված չէ -

ԵԹԵ ԱՅԳԵՇԻՄՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ՇԱՀԱՌՈՒՄ

խաղողի այգի 86 մլն ՀՀ դրամ	կարկտապաշտպան ցանցով 115.2 մլն ՀՀ դրամ
ինտենսիվ պտղատու այգի 149 մլն ՀՀ դրամ	կարկտապաշտպան ցանցով 198 մլն ՀՀ դրամ
հատապտղանոց 55.8 մլն ՀՀ դրամ	կարկտապաշտպան ցանց նախատեսված չէ -

⇒ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ծրագրի տարբերակ 1-ից օգտվելու համար անհրաժեշտ է դիմել ծրագրի մասնակից ֆինանսական կառույցներին՝

- ☞ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
- ☞ «Արմավիսբանկ» ՓԲԸ
- ☞ «Արդշինբանկ» ՓԲԸ
- ☞ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
- ☞ «ՇԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
- ☞ «ՇԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ
- ☞ «ՎՏԲ-ՇԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
- ☞ «Շայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ
- ☞ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ

ՏԱՐԲԵՐԱԿ 2

ԵԹԵ ՅԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ՍՏԱՆԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՇԱՏՈՒՑՈՒՄ

⇒ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ՝

- ✓ 0,5–5 հա խաղողի այգի.
- ✓ 0,5–3 հա հատապտղանոց կամ ինտենսիվ պտղատու այգի.
- ✓ փոխհատուցման չափը՝ 40 %.
- ✓ նվազագույնը 3 հա այգի հիմնող կողմերատիվների և սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար՝ 50 %:

ԾՐԱԳՐԻ ՄԵԿ ՇԱՀԱՌՈՒՄԸ ՏՐՎՈՂ ՎԱՐԿԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐՆ ԵՆ

ԵԹԵ ԱՅԳԵՇԻՄՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ԿԱՊԱԼԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

խաղողի այգի 8.3 մլն ՀՀ դրամ	կարկտապաշտպան ցանցով 11.9 մլն ՀՀ դրամ
ինտենսիվ պտղատու այգի 15.4 մլն ՀՀ դրամ	կարկտապաշտպան ցանցով 21.5 մլն ՀՀ դրամ
հատապտղանոց 17.6 մլն ՀՀ դրամ	կարկտապաշտպան ցանց նախատեսված չէ -

ԵԹԵ ԱՅԳԵՇԻՄՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԱՌԱՆՅ ԿԱՊԱԼԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

խաղողի այգի 6,7 մլն ՀՀ դրամ	կարկտապաշտպան ցանցով 9.58 մլն ՀՀ դրամ
ինտենսիվ պտղատու այգի 11.7 մլն ՀՀ դրամ	կարկտապաշտպան ցանցով 16.6 մլն ՀՀ դրամ
հատապտղանոց 14 մլն ՀՀ դրամ	կարկտապաշտպան ցանց նախատեսված չէ -

⇒ **ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

Ծրագրի տարբերակ 2-ից օգտվելու համար՝

- ✓ մինչև այգու հիմնումը շահառուն էլեկտրոնային կամ թղթային տարբերակով դիմում է նախարարություն՝ դիմումին կից ներկայացնելով տեղեկատվություն այգու տեղի, չափերի ու տեսակի վերաբերյալ, ինչպես նաև այգեհիմնման ծախսերի համապատասխան հաշվարկներ.
- ✓ նախարարությունը ուսումնասիրում է այգու տեղանքը, հողի օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթի առկայությունը և համապատասխանության կամ անհամապատասխանության մասին տեղեկացնում շահառուին (դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում).

- ✓ այգու հիմնման աշխատանքների ավարտից հետո շահառուն կապիտալ ներդրումները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է նախարարություն.
 - ✓ նախարարությունը ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը և դիտարկումներ կատարում այգու տարածքում (5 աշխատանքային օրվա ընթացքում).
 - ✓ համապատասխանության դեպքում պայմանագիր է կնքվում շահառուի հետ.
 - ✓ փոխհատուցման ենթակա գումարը փոխանցվում է շահառուի հաշվեհամարին (պայմանագրի կնքումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում):
- ➔ Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել նախարարության բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն, հեռ.՝ (011) 52-34-11, (011) 52-37-93:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱ-ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐԿՏԱՊԱՇՏՊԱՆ ՑԱՆՅԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԿԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի շրջանակում կսուբսիդավորվեն պտղատու և խաղողի այգիներում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրված նպատակային վարկերի տոկոսադրույքները:

⇒ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ՝

- ✓ **0,5 – 10 հա խաղողի կամ ինտենսիվ պտղատու այգի.**
- ✓ **սուբսիդավորման արդյունքում**
 - **2 % տոկոսադրույք.**
 - **կոոպերատիվների և սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար՝ 0 %.**
- ✓ **վարկի մարման ժամկետը՝ 7 տարի.**
- ✓ **մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև 1 տարի:**

Ծրագիրը կարող է իրականացվել և կապալառու կազմակերպության միջոցով, և առանց կապալառուի:

ՅՈՒՐԱՔԱՆՅՅՈՒՐ ՇԱՀԱՌՈՒՄՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԿԱՐԿԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐՆ ԵՆ՝

- ա. կապալառու կազմակերպության միջոցով տեղակայելու դեպքում՝**
 - խաղողի այգի՝ **36 մլն ՀՀ դրամ.**
 - ինտենսիվ պտղատու այգի՝ **85 մլն ՀՀ դրամ:**
- բ. առանց կապալառու կազմակերպության տեղակայելու դեպքում՝**
 - խաղողի այգի՝ **28.8 մլն ՀՀ դրամ.**
 - ինտենսիվ պտղատու այգի՝ **68 մլն ՀՀ դրամ:**

⇒ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ծրագրից օգտվելու համար անհրաժեշտ է դիմել ծրագրի մասնակից ֆինանսական կառույցներին՝

- ↪ **«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ**
- ↪ **«Արդշինբանկ» ՓԲԸ**
- ↪ **«Արմավիսբանկ» ՓԲԸ**
- ↪ **«Կոնվերս Բանկ» ՓԲԸ**
- ↪ **«ՀԱՅԲԻՋՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ**
- ↪ **«ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ**
- ↪ **«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ**
- ↪ **«Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ**
- ↪ **«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ**

→ Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել նախարարության բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն, հեռ.՝ **(011) 52-34-11, (011) 52-37-93:**



ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրով նախատեսվում է գյուղատնտեսական մշակաբույսերով զբաղեցված տարածքներում (բացառությամբ ջերմատների և ջերմոցային տնտեսությունների) ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար շահառուներին տրամադրել սուբսիդավորվող վարկ կամ կատարել ծախսերի փոխհատուցում:

Շահառուի հայեցողությամբ՝ կաթիլային կամ անձրևացման համակարգերը (մոտեցնող խողովակ, գլխամասային հանգույց և բաշխիչ ցանց) կարող են տեղադրվել կամ կապալառու կազմակերպության կամ շահառուի կողմից:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՇԱՀԱՌՈՒՆ ՀԱՏԿԱՅՎՈՂ ՎԱՐԿԻ ԿԱՄ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է 1 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ, ԱՆԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԻՑ, ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՓԵՐԻ ՀԱՄԱՐ

ա. Եթե ոռոգման արդիական համակարգերի ներդրումն իրականացնում է կապալառու կազմակերպությունը (հաշվի են առնվում նաև սխեմայի կազմման և ներդրման աշխատանքները)

- կաթիլային ոռոգման համակարգի համար՝ մինչև 2.2 մլն ՀՀ դրամ,
- անձրևացման համակարգի համար՝ մինչև 2.7 մլն ՀՀ դրամ:

բ. Եթե ոռոգման արդիական համակարգերի ներդրումն իրականացվում է առանց կապալառու կազմակերպության (հաշվի են առնվում միայն կապիտալ ծախսերը)

- կաթիլային ոռոգման համակարգի համար՝ մինչև 1.6 մլն ՀՀ դրամ,
- անձրևացման համակարգի համար՝ մինչև 1.9 մլն ՀՀ դրամ:

SURFԵՐԱԿ 1

ԵԹԵ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ՎԵՐՑՆԵԼ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՎԱԾ ՎԱՐԿ

⇒ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ՝

- ✓ սուբսիդավորման արդյունքում
 - 2 % տոկոսադրույք.
 - առնվազն 3 հա հողատարածքում ներդնող կոոպերատիվների, գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում և սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար՝ 0 %.
- ✓ վարկի առավելագույն գումարը՝ 150 մլն ՀՀ դրամ՝ աշխատանքները կապալառուի միջոցով իրականացնելու դեպքում, 110 մլն ՀՀ դրամ՝ աշխատանքներն առանց կապալառուի իրականացնելու դեպքում.
- ✓ վարկի մարման ժամկետը՝ մինչև 3 տարի.
- ✓ արտոնյալ ժամկետը՝ տարեկան մինչև 6 ամիս:

Վարկի վաղաժամկետ վճարման դեպքում տույժեր և տուգանքներ չեն սահմանվում:

⇒ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ծրագրից օգտվելու համար անհրաժեշտ է դիմել ծրագրի մասնակից ֆինանսական կառույցներին՝

- ☞ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
- ☞ «Արմավիսբանկ» ՓԲԸ
- ☞ «Արդշինբանկ» ՓԲԸ
- ☞ «Ինեկոբանկ» ՓԲԸ
- ☞ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
- ☞ «ՀԱՅԲԻՋՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
- ☞ «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
- ☞ «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ
- ☞ «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ
- ☞ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ

ՏԱՐԲԵՐԱԿ 2

ԵԹԵ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ՍՏԱՆԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՇԱՏՈՒՑՈՒՄ

⇒ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ՝

- ✓ փոխհատուցման չափը՝ 16 %.
- ✓ առնվազն 3 հա հողատարածքում ներդնող կոոպերատիվների, գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում և սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար՝ 18 %.
- ✓ փոխհատուցվող առավելագույն գումարը՝ 10 մլն ՀՀ դրամ՝ աշխատանքները կապալառուի միջոցով իրականացնելու դեպքում, 8 մլն ՀՀ դրամ՝ աշխատանքներն առանց կապալառուի իրականացնելու դեպքում.

- ✓ փոխհատուցվող առավելագույն գումարն առնվազն 3 հա հողատարածքում ներդնող կոոպերատիվներին՝ 27 մլն ՀՀ դրամ՝ աշխատանքները կապալառուի միջոցով իրականացնելու դեպքում, 20 մլն ՀՀ դրամ՝ աշխատանքներն առանց կապալառուի իրականացնելու դեպքում:

⇒ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. փոխհատուցման գործընթացին մասնակցելու համար տնտեսավարողները դիմում են նախարարություն.
2. դիմումի հիման վրա 10 աշխատանքային օրվա ընթացքում նախարարության կողմից իրականացվում է մոնիթորիգ և համաձայնության կամ մերժման որոշումը էլեկտրոնային կամ թղթային տարբերակով տրամադրվում է տնտեսավարողին.
3. համաձայնության դեպքում տնտեսավարողը սկսում է ոռոգման արդիական համակարգի ներդրման գործընթացը.
4. աշխատանքները ավարտելուց հետո տնտեսավարողը դիմում է նախարարություն՝ համապատասխան փաստաթղթերով.
5. նախարարությունն իրականացնում է մոնիթորիգ.
6. նախարարությունը դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում փոխհատուցման ենթակա գումարը փոխանցում է շահառուի համապատասխան հաշվին, եթե դիմումը համապատասխանում է ծրագրի պահանջներին:



↪ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱՊԱԼԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ՝

- ↪ «Ագրոինտեքս» ՍՊԸ
- ↪ «Ագրո Ինդուստրիա» ՍՊԸ
- ↪ «Արտագրո» ՍՊԸ
- ↪ «Վեստ Պլաստ Գրուպ» ՍՊԸ, «Նյուայլաստ» ՓԲԸ
- ↪ «Գրին Ագրո» ՍՊԸ
- ↪ «Արմայլաստ» ՓԲԸ
- ↪ «Իրիգեյթ» ՍՊԸ
- ↪ «Նորատունկ» ՓԲԸ
- ↪ «Սոլինիդ» (NETAFIM)



- ↪ «Դրիպարտ» ՍՊԸ
- ↪ «Ասշին» ՍՊԸ
- ↪ «Էկոշին Գրուպ» ՍՊԸ
- ↪ «Երիցյան» ՍՊԸ
- ↪ «Արշանդ» ՍՊԸ
- ↪ «Թերմո Դիագնոզ» ՍՊԸ
- ↪ «Իռատեկ» ՍՊԸ
- ↪ «Մ-Օազիս» ՍՊԸ
- ↪ «Լանդշաֆտ Դիզայն» ՍՊԸ
- ↪ «Սամտոն» ՍՊԸ
- ↪ «Անդ» ՍՊԸ
- ↪ «Իրրիգեյշն Սիստեմս Ֆոր Ագրիկալչեր Էնդ Լենդսկեյփ» ՍՊԸ
- ↪ «Կարինե Քոչարյան» ԱԶ
- ↪ «Ագրոսերվ» ՍՊԸ
- ↪ «Ինտեր Օկտավա» ՍՊԸ
- ↪ «Իէնէս Ըքստրաթինգ» ՍՊԸ
- ↪ «Ռոյալ Գլաս Գրուպ» ՍՊԸ
- ↪ «Պրոմ Գրուպ» ՍՊԸ
- ↪ «Գրիգև-Շին» ՍՊԸ
- ↪ «Սպայկա» ՍՊԸ
- ↪ «Սերինիտա» ՍՊԸ
- ↪ «Վարդան Կեսոյան» ԱԶ

→ Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել նախարարության Հողերի օգտագործման և մելիորացիայի վարչություն, հեռ.՝ (011) 29 74-35, (011) 29-74-33:

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ»

1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ
2. ԸՅԱՍՏԱՆԻ ԸՆԹԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ` ԼԻԶԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ
3. ԸՅԱՍՏԱՆԻ ԸՆԹԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ` ԼԻԶԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ
4. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ «ԽԵԼԱՅԻ» ԱՆԱՄՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՇՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ
5. ԸՅԱՍՏԱՆԻ ԸՆԹԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՈՒՄՔԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ (ԳՆՈՒՄՆԵՐԻ) ՆՊԱՏԱԿՈՎ ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ
7. ԸՅԱՍՏԱՆԻ ԸՆԹԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽԱՂՈՂԻ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՄՇԱԿՎՈՂ ԻՆՏԵՆՍԻՎ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ԵՎ ԸՏԱՊՏՂԱՆՈՑՆԵՐԻ ԸԻՄՆՄԱՆ ԸԱՍԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ
8. ԸՅԱՍՏԱՆԻ ԸՆԹԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐԿՏԱՊԱՇՏՊԱՆ ՑԱՆՅԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԸԱՍԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ
9. ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ԸԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԸԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԾՐԱԳՐԻ ՄԱՐԱՄԱՆԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ԸԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՔ`

→ Այցելել www.minagro.am պաշտոնական կայք,
«Պետական օժանդակության ծրագրեր» բաժին,

→ Զանգահարել **ԹԵԺ ԳԻԾ` (055) 54-19-68**
